# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10,
Հեռ. (0253) 6-16-62, www.odzun.am, էլ. փոստ odzun.lori@mta.gov.am, odzun@bk.ru

**թիվ 121-15**
**«13» 04 2015թ**

*ՀՀ Լոռու մարզպետ*
*Պարոն Ա. Նալբանդյանին*

Ձեզ ենք ներկայացնում Օձուն գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 10-ի N 8-ից N 12 որոշումները:

Առդիր՝ վեց թերթ:

*Հարգանքով՝*
*Օձուն համայնքի ղեկավար* *Ա. Տիփանյան*

Կատարող՝ Վ. Տիտանյան
հեռ. 0253-6-16-56

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**10 ապրիլի 2015 թվական, N 8-Ա**

**ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ՉՈՐՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ և 15-րդ հոդվածների՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 10-ի չորրորդ արտահերթ նիստի օրակարգը.

1) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

3) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՎԵՏԻՔ ԱՆՏՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

4) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Կողմ ( 6 )** **Դեմ ( չկա )** **Ձեռնպահ ( չկա )**

Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2015թ., ապրիլի 10, ժ. 11:00**
**Գ. Օձուն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**10 ապրիլի 2015 թվականի, N 9-Ն**

## ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի երրորդ կետի, 54-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1.Կատարել փոփոխություններ Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» N 71-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| **Կողմ ( 6 )** | **Դեմ ( չկա )** | **Ձեռնպահ ( չկա )** |
|---|---|---|
| Ս. ԱՍՐՅԱՆ | | |
| Ա. ԲԵԺԱՆՅԱՆ | | |
| Դ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Ս. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Գ. ԹՈՐՈՍՅԱՆ | | |
| Ս. ՏԻՏԱՆՅԱՆ | | |

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2015թ., ապրիլի 10**
**Գ. Օձուն**

*Հավելված*
*ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու*
*2015 թվականի ապրիլի 10-ի N 9-Ն որոշման*

# ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի մասին» N 71-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Եկամտային հատվածում.

1) 1256 տողով նախատեսված (այլ դոտացիաներ) գումարն ավելացնել 668 600 (վեց հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամով.

2) 1257 տողով նախատեսված (հատկացումներ) սուբվենցիաների գումարն ավելացնել 510 300 (հինգ հարյուր տաս հազար երեք հարյուր) ՀՀ դրամով.

3) վարչական բյուջեի տարեվերջի ազատ մնացորդը՝ 125 200 (մեկ հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամը տեղափոխել ֆոնդային մաս.

4) 8411 հոդվածով հողի իրացումից՝ մուտքում, նախատեսել 3 620 000 (երեք միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամով:

2. 09.5.1. գործառնական դասակարգման նախահաշվի 4637 հոդվաշի գումարն ավելացնել 510 300 (հինգ հարյուր տաս հազար երեք հարյուր) ՀՀ դրամով.

3. 09.1.1 գործառնական դասակարգման նախահաշվի 4637 հոդվածի գումարն ավելացնել 668 600 (վեց հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամով:

4. 01.1.1 գործառնական դասակարգման նախահաշվի 5121 հոդվածով նախատեսել 3 745 200 (երեք միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**10 ապրիլի 2015 թվական, N 10-Ա**

**ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի առաջին կետի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Կատարել փոփոխություն Օձուն համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 25-ի <<ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0053-0095 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.16741 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 6-Ա որոշման մեջ.

որոշման առաջին կետում <<հասարակական>> բառը փոխարինել <<բնակելի>> բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ ( 6 )** **Դեմ ( չկա )** **Ձեռնպահ ( չկա )**

Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2015թ., ապրիլի 10**
**Գ. Օձուն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**10 ապրիլի 2015 թվական, N 11-Ա**

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՎԵՏԻՔ ԱՆՏՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15–րդ հոդվածի 3–րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1.Օձուն համայնքի բնակիչ Ավետիք Ամրաստանի Անտոնյանին (հասցե գ. Օձուն, փողոց 4, տուն 26/1, ՀՎՀՀ 13811974) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2014 և 2015 թվականների գույքահարկի ապառքի՝ 13 333 (տասներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ գումարի չափով և 2014 թվականի գույքահարկի տույժից՝ 1 040 (մեկ հազար քառասուն) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Սույն որոշման համար հիմք են հանդիսանում Օձուն համայնքի բնակիչ Ա. Անտոնյանի դիմումը և Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Կողմ ( 6 ) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|
| Ս. ԱԱՐՅԱՆ | | |
| Ա. ԲԵԺԱՆՅԱՆ | | |
| Դ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Ս. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Գ. ԹՈՐՈՍՅԱՆ | | |
| Ս. ՏԻՏԱՆՅԱՆ | | |

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2015թ., ապրիլի 10**
**Գ. Օձուն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**10 ապրիլի 2015 թվական, N 12-Ա**

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15–րդ հոդվածի 3–րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1.Օձուն համայնքի բնակիչ Դավիթ Համլետի Դավթյանի (հասցե գ. Օձուն, փողոց 14, փակուղի 1, տուն 9, ՀՎՀՀ Տ0250320) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2014 և 2015 թվականների գույքահարկի ապառքներից՝ 12 333 (տասներկու հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ գումարի չափով և 2014 թվականի գույքահարկի տույժից՝ 984 (իննը հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Սույն որոշման համար հիմք են հանդիսանում Օձուն համայնքի բնակիչ Դ. Դավթյանի դիմումը և Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ ( 6 )** **Դեմ ( չկա )** **Ձեռնպահ ( չկա )**

Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2015թ., ապրիլի 10**
**Գ. Օձուն**